526 Գալիս եմ Քեզ, Հիսուս,

1. Գալիս եմ Քեզ, Հիսուս,
Խաչս վերցնեմ,
Դու իմ միակ հույսն ես,
Իմ կյանքի աղբյուր:
Մեղավոր, անարժան,
Թույլ եմ, տկար եմ,
Արժանիքներ չունեմ՝
Առջևդ կանգնեմ:

Փառք Քեզ, (3) երկնքի Տիրակալ,
Պարտական ենք մենք Քեզ,
Հիսուս սիրելի:

2. Հիսուս, երկնքի Տեր ես,
Փրկիչ Իշխան ես,
Սիրով ընդունեցիր,
Ինձ բժշկեցիր:
Սուրբ արյանդ գինն եմ,
Տկար զավակդ եմ,
Մեղա եմ Քեզ, Հիսուս,
Ազատիր մեղքից:

3. Քույրիկիս, եղբորս
Օգնիր, բժշկիր,
Հավատքի, սիրո մեջ
Հաստատուն պահիր,
Որ Քո Խոսքի լույսը
Ճառագի մեր մեջ,
Ու հավիտյան ապրենք
Տեր, Քո սիրո մեջ: